# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/8

ք. Երևան «06» 12 2017թ.

ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Մ. Մինասյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ալեքսանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «**գործարքների իրականացման և պատվերով ծրագրային ապահովման մշակման**» ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 29150000 (քսանիննը միլիոն հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ: Ընդ որում՝

1-ին չափաբաժնի համար մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 11700000 (տասնմեկ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժնի համար՝ մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 17450000 (տասնյոթ միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն | «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ 02505511 | ք. Երևան, Շիրակի փ. 2-րդ շենք, բն 28 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Շենգավիթ մ/ճ |
| Հ/Հ 900011017002 | Հ/Հ 163018219838 |
| | ՀՎՀՀ 02236157 |
| ------------------------------------ (ստորագրություն) | ------------------------------------ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
«06» 12 2017 թ. կնքված
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/8 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր քանակը | Մատուցման | |
| | | | | | | Հասցեն | Ժամկետը |
| 1. | 72231200-10 | **ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԸ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳ (ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ) ՄՇԱԿԵԼՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**<br><br>Նախաբան<br>Համաձայն գործող կարգի ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայությունը, ՀՀ ոստիկանությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը (այսուհետ՝ համապատասխան մարմիններ) իրենց համակարգի ծառայողներին (զինծառայողներին և նրանց հավասարեցված անձանց) և նրանց ընտանիքների անդամներին զինվորական կենսաթոշակների և պարգևավճարների նշանակման գործառույթն իրականացնում են «Զինվորական կենսաթոշակ 2» տեղեկատվական համակարգի միջոցով:<br>Հաշվի առնելով առկա խնդիրները՝ նախատեսվում է սկսած 2018 թվականի հունվարի 1-ից համապատասխան մարմինների համակարգերի ծառայողներին (զինծառայողներին և նրանց հավասարեցված անձանց) և նրանց ընտանիքների անդամներին զինվորական կենսաթոշակների և պարգևավճարների նշանակման գործառույթն իրականացնել պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի («Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ի) միջոցով, հետևյալ ընթացակարգով.<br>1) համապատասխան մարմինը «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ է մուտքագրում զինվորական կենսաթոշակների և պարգևավճարների նշանակման (վճարման) համար անհրաժեշտ տեղեկատվությունը, | դրամ | 11700000 | 1 | ք. Երևան Նալբանդյան 13 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված՝ մինչև 15.12.2017 թ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2) Ծառայությունը, հիմք ընդունելով շտեմարան մուտքագրված տվյալները (շտեմարանում կատարված փոփոխությունները) ձևավորում է համապատասխան մարմնի համակարգի վճարման նախնական ցուցակը (այսուհետ՝ նախնական ցուցակ)՝ էլեկտրոնային տարբերակով, որը պահպանվում է շտեմարանում և հասանելի է համապատասխան մարմնին՝ դիտելու հնարավորությամբ,<br><br>3) Համապատասխան մարմինը ուսումնասիրում է նախնական ցուցակը և, անհամապատասխանությունների (անճշտությունների) բացակայության հաստատում է նախնական ցուցակը, ձևավորում է (տպում է) անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայտ-պահանջագիրը և կնքած հայտ-պահանջագիրը ներկայացնում է ծառայություն (նախնական ցուցակում առկա անճշտությունները ճշտում է համապատասխան մարմինը՝ շտեմարանում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու միջոցով, որից հետո ձևավորվում է նոր նախնական ցուցակ),<br><br>4) Ծառայությունը հաստատված նախնական ցուցակի հիման վրա ձևավորում է Համապատասխան մարմնի վճարման ցուցակ՝ ըստ վճարման եղանակի և.<br><br>ա. անկանխիկ եղանակով վճարման ցուցակները կենտրոնացված կարգով տրամադրում է բանկերին,<br>բ. կանխիկ եղանակով վճարման ցուցակները տրամադրում է տարածքային բաժիններին՝ տպելու և Հայփոստին տրամադրելու համար,<br>5) Վճարման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ է մուտքագրում Ծառայությունը (ընդ որում, անկանխիկ եղանակով վճարման արդյունքները մուտքագրվում է կենտրոնացված կարգով, իսկ կանխիկ եղանակով վճարման ցուցակները՝ Ծառայության տարածքային բաժինների կողմից):<br><br>Սակայն «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ի հնարավորությունները բավարար չեն վերը նշված խնդիրը լուծելու համար՝ հաշվի առնելով աշխատանքային և զինվորական կենսաթոշակները նշանակելու (կենսաթոշակների չափերը հաշվարկելու), կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու և վերսկսելու կարգերի տարբերությունները, զինվորական ծառայության ստաժը հաշվարկելու առանձնահատկությունները:<br>Մասնավորապես, «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում բացակայում է զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու, Զինվորական կենսաթոշակի իրավունքը որոշելու և Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող զինվորական ծառայության ստաժը հաշվարկելու (հաշվառելու) հնարավորությունը (ֆունկցիաները), ինչպես նաև կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու և վերսկսելու հնարավորությունը (ֆունկցիան) այն դեպքերում, երբ դա կիրառելի բացառապես զինվորական կենսաթոշակի համար:<br>Հաշվի առնելով վերը նշվածը՝ նախատեսվում է մշակել և ներդնել համապատասխան ենթահամակարգ (այսուհետ՝ Համակարգ):<br>**Առաջադրանքի Նպատակը**<br>Ծառայության տրամադրման նպատակն է մշակել տեղեկատվական Համակարգ, որը կապահովի.<br>1) զինվորական կենսաթոշակների նշանակումը (չափը հաշվարկելը՝ ըստ տեսակների), Զին ծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության օրենքի (այդ | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | թվում տարբեր ժամանակներում ընդունված) ֆորմալ նկարագրության ապահովում էլեկտրոնային կենսաթոշակ համակարգի օրենսդրական բազայում,<br>2) Զինվորական կենսաթոշակի իրավունքը որոշելու և Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող զինվորական ծառայության ստաժը հաշվարկելը (հաշվառելը),<br>3) Զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձանց տրվող պարգևավճարների նշանակումը,<br>4) Կենսաթոշակ և պարգևավճար ստանալու իրավունքը դադարեցնելը և վերսկսելը այն դեպքերում, երբ դա կիրառելի բացառապես զինվորական կենսաթոշակի համար<br>5) Վճարման ցուցակները ձևավորելը,<br>6) Վճարման ցուցակների հիման վրա անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայտ-պահանջագիրը ձևավորելը,<br>7) Անհրաժեշտ հաշվետվությունների ձևավորումը և այլն:<br>**Աշխատանքների շրջանակը**<br>**1. Օգտվողների կառավարում և Հասանելիության աստիճանների սահմանում**<br>Համակարգի օգտվողներն են համապատասխան մարմինները և Ծառայությունը:<br>Համակարգում օգտվողների կառավարումը և հասանելիության աստիճանների սահմանումը իրականացվելու է «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ի օգտվողների կառավարման գործիքներով:<br>Համակարգում սահմանվելու են հետևյալ դերերը՝ օգտվողների տարբեր խմբերի համար.<br>1) զինվորական կենսաթոշակի և պարգևավճարի նոր գործի ստեղծում (համապատասխան տվյալների մուտքագրում), զինվորական կենսաթոշակի չափի հաշվարկում,<br>2) նախնական ցուցակի ձևավորում, հաստատված նախնական ցուցակի հիման վրա վճարման ցուցակների ձևավորում, վճարման արդյունքների մուտքագրում «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ,<br>3) նախնական ցուցակի հաստատում և հայտ-պահանջագրի ձևավորում:<br>**2. Դիմումների հաշվառում**<br>Զինվորական կենսաթոշակ կամ պարգևավճար նշանակելու դիմումը հաշվառելու համար օգտագործվում է «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ի համապատասխան միջերեսը (դիմումի հաշվառումը իրականացվում է ընդհանուր հիմունքներով):<br>**3. Զինվորական կենսաթոշակի և պարգևավճարի նոր գործի ստեղծման միջերես**<br>Զինվորական կենսաթոշակի և պարգևավճարի նոր գործի ստեղծման միջերեսը պետք է առնվազն ապահովի.<br>1. Կենսաթոշակառուի (անձի, ում նշանակվում է կենսաթոշակ) տվյալների (անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթղթի տեսակ, սերիա և համար, ՀԾՀ, քաղաքացիություն, ծննդյան օր, ամիս, տարի, սեռ, հասցե, տվյալ հասցեով հաշվառվելու օր, ամիս, տարի) ներբեռնումը ՀՀ բնակչության պետական ռեգիստրից և ներառումը Համակարգ,<br>2. Զինվորական կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ տեղեկատվության մուտքագրումը համակարգ, այդ թվում.<br>1) զորքերի կազմը, կենսաթոշակառուի և (կամ) մահացած զինծառայողի կատեգորիան՝ համաձայն «Պետական կենսաթոշակների մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 668-Ն որոշման, | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2) զինվորական ծառայության ժամանակահատվածը (սկիզբը և ավարտը),<br>3) զինվորական ծառայության տվյալ ժամանակահատվածի կատեգորիան (տեսակը)՝ համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի,<br>4) զինվորական ծառայությունից արձակվելու պատճառը,<br>5) զինծառայողի զբաղեցրած վերջին պաշտոնը և այդ պաշտոնի համար «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գործակիցը (զինծառայողի անձնական գործակից),<br>6) առկայության դեպքում՝ հաշմանդամ ճանաչվելու օրը, ամիսը, տարին, հաշմանդամության ժամկետը, հաշմանդամության պատճառը (անկախ զինվորական կենսաթոշակի տեսակից),<br>7) զինծառայողի մահվան (զոհվելու) դեպքում՝ մահանալու (զոհվելու) օրը, ամիսը, տարին, պատճառը, կենսաթոշակառուի (անձի, ում նշանակվում է կենսաթոշակ) ազգակցական կապը մահացած (զոհված) զինծառայողի հետ՝ համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի,<br>3. Զինվորական կենսաթոշակի իրավունքը որոշելը (կենսաթոշակ նշանակելը),<br>4. Պարգևավճարի նշանակումը (եթե փոխկապակցված է տվյալ տեսակի կենսաթոշակին՝ անկախ առանձին դիմում ներկայացնելուց)՝ կախված կատեգորիայից, հաշմանդամ ճանաչվելու ժամկետից, հաշմանդամության պատճառից, զորքերի կազմից, մահվան (զոհվելու) պատճառից և այլ հանգամանքներից (համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 668-Ն որոշման),<br>5. Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելը՝ համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 19-րդ, 21-րդ և 23-րդ հոդվածների,<br>6. Պարգևավճարի չափը որոշելը՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 668-Ն որոշման,<br>7. Կենսաթոշակի վճարման եղանակը (բանկային հաշվի համարը)։<br>Ընդ որում, համակարգը պետք է ապահովի.<br>1. անհրաժեշտ դաշտերը լրացված լինելու ստուգում՝ ըստ անհրաժեշտության դաշտի պարտադիրության մասին էկրանին ցուցադրելով նախազգուշացում,<br>2. հնարավորության դեպքում՝ մուտքագրված տեղեկատվության (տվյալների) անհամատեղելիության ստուգում՝ ըստ անհրաժեշտության դաշտի այդ մասին էկրանին ցուցադրելով նախազգուշացում։<br>**4. Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու և պարգևավճարների չափերը որոշելու համար հիմք ընդունվող ելակետային ցուցանիշների մուտքագրումը,**<br>Համակարգը պետք է ապահովի նաև.<br>1. Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող հիմնական կենսաթոշակի չափի վերաբերյալ տեղեկատվության մուտքագրումը (փոփոխությունը),<br>2. Զինվորական ծառայության մեկ տարվա արժեքի վերաբերյալ տեղեկատվության մուտքագրումը (փոփոխությունը),<br>3. Պարգևավճարների չափերի մուտքագրումը (փոփոխությունը),<br>4. Մուտքագրված (փոփոխված) տվյալների կիրարկումը (Զինվորական կենսաթոշակի և պարգևավճարների չափը վերահաշվարկելը)։ | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | **5. Զինվորական կենսաթոշակ (պարգևավճար) ստանալու իրավունքը և կենսաթոշակ վճարելը դադարեցնելը, կենսաթոշակ (պարգևավճար) ստանալու իրավունքը վերականգնելը, կենսաթոշակ վճարելը վերսկսելը**<br>Զինվորական կենսաթոշակ (պարգևավճար) ստանալու իրավունքը և կենսաթոշակ վճարելը դադարեցնելը, կենսաթոշակ (պարգևավճար) ստանալու իրավունքը վերականգնելը, կենսաթոշակ վճարելը վերսկսելու համար օգտագործվում են «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ի համապատասխան միջերեսները:<br>Ի լրումն վերը նշվածի՝ համակարգը պետք է հնարավորություն տա.<br>1) մուտքագրել զինվորական ծառայության անցնելու, քրեակատարողական ծառայողի, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի կամ դատավորի պաշտոնի նշանակվելու օրը, ամիսը, տարին.<br>2) մուտքագրված տվյալների հիման վրա դադարեցնել կենսաթոշակ ստանալու իրավունքը (կենսաթոշակը վճարելը) և Համակարգում հաշվառել համապատասխան տեղեկատվությունը (այդ թվում՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը (կենսաթոշակը վճարելը) դադարեցնելու պատճառը),<br>3) եթե կենսաթոշակ ստանալու իրավունքը (կենսաթոշակը վճարելը) դադարեցվել է նշված պատճառով՝ մուտքագրել զինվորական ծառայությունից, քրեակատարողական ծառայողի, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի կամ դատավորի պաշտոնից արձակվելու օրը, ամիսը, տարին և վերականգնել կենսաթոշակ ստանալու իրավունքը (վերսկսել կենսաթոշակը վճարելը),<br>4) վճարման ենթակա կենսաթոշակի և պարգևավճարի գումարները հաշվարկելը կենսաթոշակ (պարգևավճար) ստանալու իրավունքը վերականգնելու, կենսաթոշակ վճարելը վերսկսելու դեպքում (հաշվի առնելով զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող հիմնական կենսաթոշակի չափի, Զինվորական ծառայության մեկ տարվա արժեքի և պարգևավճարի չափերի փոփոխությունները):<br>**6. Վճարման ցուցակների ձևավորման միջերես**<br>Վճարման ցուցակների ձևավորման միջերեսը առնվազն պետք է ապահովի.<br>1. Նախնական ցուցակի ձևավորումը և Նախնական ցուցակի էլեկտրոնային տարբերակի պահպանումը համակարգում,<br>2. Նախնական ցուցակի արտածումը excel ծրագրով և դիտումը,<br>3. Նախնական ցուցակի հաստատումը և չեղարկումը (նոր նախնական ցուցակ ձևավորելու համար),<br>4. Հաստատված Նախնական ցուցակի հիման վրա Տվյալ ամսվա վճարման ցուցակի ձևավորումը,<br>5. Տվյալ ամսվա վճարման ցուցակի էլեկտրոնային տարբերակի որոնումը և որոնման արդյունքների դիտումը՝ անկախ անցած ժամանակահատվածից,<br>6. Վճարման ցուցակների էլեկտրոնային տարբերակներում անձի տվյալների որոնումը և որոնման արդյունքների դիտումը,<br>7. Անհրաժեշտ միջոցների հայտ-պահանջագրի ձևավորումը և տպումը, ձևավորված հայտ-պահանջագրի էլեկտրոնային տարբերակի պահպանումը (ամրագրումը) համակարգում,<br>8. Տվյալ ամսվա հայտ-պահանջագրի էլեկտրոնային տարբերակի որոնումը և որոնման արդյունքների դիտումը՝ անկախ անցած ժամանակահատվածից,<br>9. Կանխիկ եղանակով վճարման ցուցակների տարանջատումը՝ ըստ տարածքային | | | | | |

բաժինների (հաշվի առնելով հաշվառման վայրի հասցեն) և տպագրումը:

Ընդ որում, յուրաքանչյուր Համապատասխան մարմնի Նախնական ցուցակը և վճարման ցուցակը ձևավորվում է առանձին:

**7. Զինվորական կենսաթոշակների և պարգևավճարների վճարման արդյունքները համակարգ մուտքագրելը**

Զինվորական կենսաթոշակների և պարգևավճարների վճարման արդյունքները համակարգ մուտքագրելն իրականացվում է ընդհանուր հիմունքներով.

1. Անկանխիկ եղանակով վճարման արդյունքները՝ կենտրոնացված կարգով,
2. Կանխիկ եղանակով վճարման արդյունքները՝ ապակենտրոնացված կարգով (տարածքային բաժինների կողմից),

Ըստ այդմ, Զինվորական կենսաթոշակների և պարգևավճարների վճարման արդյունքները համակարգ մուտքագրելու համար օգտագործվում են «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ի համապատասխան միջոցները:

**8. Ինտեգրում այլ տեղեկատվական համակարգերին (տվյալներին)**

Համակարգը պետք է ինտեգրվի «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգին՝ որպես ենթահամակարգ:

**9. Արխիվացում**

Համակարգում տվյալների արխիվացումը իրականացվելու է «Էլեկտրոնային կենսաթոշակ» համար կիրառվող ընդհանուր կանոններով:

**10. Որոնման համակարգ և հաշվետվություններ**

Դիմումի, Զինվորական կենսաթոշակի (պարգևավճարի) գործի որոնումն իրականացվում է «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում կիրառվող ընդհանուր հիմունքներով:

Ի լրումն վերը նշվածի՝ Համակարգը պետք է ունենա՝

- Ստանդարտ հաշվետվություն՝ զինվորական կենսաթոշակ և պարգևավճար ստանալու իրավունք ունեցող անձանց վերաբերյալ (ըստ կենսաթոշակի և պարգևավճարների տեսակների և համակարգ ներառված այլ ցուցանիշների),
- Ստանդար հաշվետվություն՝ վճարման ցուցակ ներառված և փաստացի վճարված զինվորական կենսաթոշակի և պարգևավճարի գումարների վերաբերյալ (ըստ կենսաթոշակի և պարգևավճարների տեսակների և համակարգ ներառված այլ ցուցանիշների):

**11. Ընդհանուր տեխնիկական պահանջներ**

Համակարգը պետք է ունենա՝

- Բազմակապ կառուցվածք
- Ստանդարտ RDBMS (պետք է տրամադրվի Կատարողի կողմից)
- Web native standard workflow (W3C համատեղելի, պետք է տրամադրվի Կատարողի կողմից)
- Վեբ ինտերֆեյս (Full web interface)
- XML համատեղելի կառուցվածք
- Լիարժեք հայացման հնարավորություն (օգտվողի ինտերֆեյսի և դաշտերի արժեքների համար հայկական այբուբենի կիրառման հնարավորություն)
- APIs առնվազն մեկ ստանդարտ լեզվով,

Կատարողը կարող է առաջարկել առկա, պատրաստի ծրագրային ապահովում և այնուհետև հարմարեցնել, տեղայնացնել և համապատասխանեցնել այն սույն տեխնիկական առաջադրանքի պահանջներին կամ կարող է առաջարկել մշակել նախապես պատվիրված ծրագրային ապահովում՝

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | մրցակցային տեսակետից որևէ տարբերություն չի կիրառվի առաջարկներից և ոչ մեկի դեպքում:<br>**Ծառայությունների իրականացման փուլերը**<br>Ծառայությունները մատուցվելու են երկու փուլով:<br>1) Փուլ 1. Համակարգի նախագծում, Զինվորական կենսաթոշակի և պարգևավճարի նոր գործի ստեղծման միջերեսի մշակում և ներդրում (ինտեգրում «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ին), Վճարման ցուցակի ձևավորման միջերեսի մշակում և ներդրում (ինտեգրում «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ին), «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում անհրաժեշտ փոփոխությունների իրականացում,<br>2) Փուլ 2. Վճարման ցուցակի ձևավորման միջերեսի մշակում և ներդրում (ինտեգրում «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ին), «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում անհրաժեշտ փոփոխությունների իրականացում, Օգտվողի ձեռնարկի մշակում և անձնակազմի վերապատրաստում:<br>Համակարգի ամբողջական կիրարկումը նախատեսվում է ոչ ուշ, քան 2018 թվականի հունվարի 1-ից: Միաժամանակ, մինչև 2019 թվականի հունվարի 1-ը Կատարողը պետք է իրականացնի երաշխիքային սպասարկում՝ շտկելով հայտնաբերված թերությունները:<br>**Փուլ 1. Համակարգի նախագծում, գործառույթի վերաբերյալ տեղեկատվության հաշվառման միջերեսի մշակում և ներդրում**<br>• Գործառույթային պահանջների (այդ թվում՝ այլ տեղեկատվական համակարգերի հետ ինտեգրման պահանջների) գնահատում և նկարագրություն,<br>• Համակարգի հիմնական բիզնես գործընթացների և ինտերֆեյսային նկարագրություն (ներառյալ՝ դաշտերի նկարագրություն),<br>• Զինվորական կենսաթոշակի և պարգևավճարի նոր գործի ստեղծման միջերեսի ծրագրավորում՝ համաձայն պահանջների և նկարագրությունների,<br>• Զինվորական կենսաթոշակի և պարգևավճարի նոր գործի ստեղծման ընթացակարգերի ծրագրավորում՝ համաձայն բիզնես գործընթացների նկարագրության,<br>• Զինվորական կենսաթոշակի և պարգևավճարի նոր գործի ստեղծման միջերեսի տեղակայում (ինտեգրում) «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում,<br>**Փուլ 2. Աշխատանքային ստաժի (մուտքագրման) միջերեսի մշակում և ներդրում,**<br>• Վճարման ցուցակի ձևավորման միջերեսի ծրագրավորում՝ համաձայն փուլ 1-ում նշված պահանջների և նկարագրությունների,<br>• Վճարման ցուցակի ձևավորման ընթացակարգերի ծրագրավորում՝ համաձայն փուլ 1-ում նշված բիզնես գործընթացների նկարագրության,<br>• Անհրաժեշտ միջոցների հայտ-պահանջագրի ձևավորման ընթացակարգերի ծրագրավորում՝ համաձայն փուլ 1-ում նշված բիզնես գործընթացների նկարագրության,<br>• Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու և պարգևավճարների չափերը որոշելու համար հիմք ընդունվող ելակետային ցուցանիշների մուտքագրումը և կիրարկումն ապահովող փոփոխությունների ծրագրավորում,<br>• Զինվորական կենսաթոշակների և պարգևավճարների վճարման արդյունքները համակարգ մուտքագրելու առանձնահատկությունների ծրագրավորում,<br>• Զինվորական կենսաթոշակ (պարգևավճար) ստանալու իրավունքը և կենսաթոշակ վճարելը դադարեցնելու, կենսաթոշակ (պարգևավճար) ստանալու իրավունքը վերականգնելու, կենսաթոշակ վճարելը վերսկսելու առանձնահատկությունների ծրագրավորում, | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | • ստանդարտ հաշվետվությունների ծրագրավորում,<br>• օգտվողի ձեռնարկի մշակում<br>• անձնակազմի վերապատրաստում<br>• 2-րդ փուլի աշխատանքների արդյունքների տեղակայում «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում,<br>• համակարգի փորձնական կիրառություն և հայտնաբերված թերությունների շտկում:<br>**Կատարողը կարող է միաժամանակ աշխատել մի քանի փուլի վրա, երբ դա հնարավոր է:**<br>Հաշվետվություններ<br>**Ծառայությունների իրականացման ընթացքում յուրաքանչյուր փուլի աշխատանքների ավարտից հետո Կատարողը Պատվիրատուին պետք է ներկայացնի հաշվետվություններ համաձայնեցման նպատակով, որոնց պետք է կցվեն տվյալ փուլում մշակված բոլոր նյութերը:**<br>**Կատարողը նշված հաշվետվությունների թղթային և էլեկտրոնային տարբերակները մեկական օրինակով հայերեն լեզվով պետք է ներկայացնի Պատվիրատուին ոչ ուշ, քան տվյալ փուլի աշխատանքները ավարտելուց հետո՝ 5 օրվա ընթացքում:**<br>Ժամկետներ և գաղտնիություն<br>**Նախագծի ընդհանուր ժամկետը սահմանված է պայմանագրով, որին գումարվում է երաշխիքային սպասարկման ժամկետը՝ մինչև 01.01.2019թ.:**<br>**Կատարողը պարտավորվում է.**<br>**1) ապահովել այն տեղեկատվության գաղտնիությունը, որը նրան հայտնի կդառնա Նախագծի իրականացման ընթացքում,**<br>**2) բացառել Նախագծի իրականացման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկատվության օգտագործումը այլ նպատակներով, քան նախագծի իրականացումն է, կամ փոխանցումը երրորդ կողմին:**<br>Կազմակերպական հարցեր<br>**Պատվիրատուն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունն է:**<br>**Վերապատրաստման հետ կապված ծախսերը (բացի վերապատրաստողներին վճարելը) հոգում է պատվիրատուն:**<br>Այլ պայմաններ<br>**Համակարգի հետ կապված բոլոր գույքային և ոչ գույքային իրավունքները պատկանում են Պատվիրատուին** | | | | | |
| 2. | 72231200/9 | **ՔԿԱԳ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ԾՆՆԴՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ԶՐԿԵԼՈՒ (ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՏԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳ (ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ) ՄՇԱԿԵԼՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**<br>Նախաբան<br>Երեխայի ծննդյան միանվագ և մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստը նշանակելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն և 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշումներով:<br>Համաձայն գործող իրավակարգավորումների՝ մինչև 2 տարեկան երեխայի խնամքի և | դրամ | 17450000 | 1 | ք. Երևան, Նալբանդյան 13 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված՝ մինչև 15.12.2017 թ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակելու համար անհրաժեշտ տվյալ է երեխայի սերման փաստը:<br>Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում տրվող նպաստ ստացող անձի մահվան և օրենքով սահմանված այլ դեպքերում թաղման նպաստ նշանակելու հետ կապված հարաբերությունները կանոնակարգված են «Պետական կենսաթոշակների մասին», «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն, 2014 թվականի հունիսի 26-ի N 635-Ն որոշումներով:<br>Միաժամանակ, վերը նշված նպաստները նշանակելիս, ինչպես նաև՝ ընտանեկան դրամագլուխը տնօրինելիս կիրառական նշանակություն ունի նաև ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ տեղեկատվությունը:<br>Համաձայն գործող իրավակարգավորումների՝ թաղման նպաստը նշանակվում և վճարվում է մահվան վկայականը ներկայացնող անձին:<br>Վերոնշյալ նպաստները նշանակում և վճարում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն):<br>Հարկ է նկատի ունենալ, որ երեխայի սերման փաստի, ծնողական իրավունքներից զրկելու կամ ծնողական իրավունքները վերականգնելու, մահվան վկայականը ստացող (մահը գրանցելու համար դիմած) անձի վերաբերյալ տեղեկատվությունը առկա է ՔԿԱԳ մարմիններում:<br>Մասնավորապես, երեխայի ծնողների (այդ թվում՝ հայրության որոշման հիմքերի) մասին տեղեկատվությունը ներառվում է ծննդյան ակտի գրառման մեջ, իսկ մահվան վկայականը ստացող (մահը գրանցելու համար դիմած) անձի վերաբերյալ տեղեկատվությունը՝ մահվան ակտի գրառման մեջ:<br>Ծննդյան ակտի գրառումը ներառում է նաև ծնողական իրավունքներից զրկելու և ծնողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ տեղեկատվությունը (համաձայն ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 60-րդ հոդվածի՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում դատարանը պարտավոր է այդ վճռի քաղվածքն ուղարկել երեխայի ծննդի պետական գրանցման վայրի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին):<br>Սակայն գործող իրավակարգավորումների համաձայն՝ առցանց ներկայացված դիմումի հիման վրա նշանակվում և վճարվում է միայն երեխայի ծննդյան միանվագ նպաստը՝ 1-ին և 2-րդ երեխայի ծննդյան դեպքում:<br>Խնդրո առարկա է այն հանգամանքը, որ ՔԿԱԳ մարմիններում առկա տեղեկատվությունը դեռևս չի կիրառվում Ծառայության տարածքային բաժինների կողմից՝ վերը նշված նպաստները նշանակելու գործընթացում (Ծառայության տարածքային բաժինները վերոնշյալ նպաստները նշանակում և վճարում են ներկայացված փաստաթղթերի հիման վրա «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ մուտքագրված տվյալների հիման վրա):<br>Վերը նշված իրողությունները պայմանավորված են ՔԿԱԳ մարմինների հետ տեղեկատվության փոխանակության ընթացակարգերով:<br>Համաձայն ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած ՀՀ կառավարության ծրագրի՝ նախատեսվում է ամբողջականացնել (ընդլայնել) առցանց մատուցվող ծառայությունների շրջանակը՝ նպատակ ունենալով կենսաթոշակների, նպաստների և այլ դրամական վճարների բնագավառում շարունակաբար նվազեցնել առկա ռիսկերը, ապահովել ծառայությունների | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | հասանելիությունն ու մատչելիությունը:<br>Իսկ համաձայն «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի՝ սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների գործունեության մեթոդական ղեկավարում ու վերահսկողություն իրականացնող մարմնի հետ համատեղ սահմանած կարգով, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստանում է պետական նպաստ նշանակելու համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վերաբերյալ տեղեկություններ (մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստը, երեխայի ծննդյան միանվագ նպաստը և թաղման նպաստը «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական նպաստներ են):<br>ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի համաձայն՝ նախատեսվում է առցանց դիմումի հիման վրա նշանակել և վճարել նաև մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստը, ինչպես նաև երեխայի ծննդյան միանվագ նպաստը՝ 3-րդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում (121-րդ և 133-րդ կետեր):<br>Միաժամանակ, նախատեսվում է թաղման նպաստի դիմումը ընդունել (հաշվառել «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում) մահվան ակտը գրանցելու համար դիմելու դեպքում, անմիջապես ՔԿԱԳ մարմնում:<br>Հաշվի առնելով վերը նշվածը՝ նախատեսվում է ներդնել ՔԿԱԳ մարմինների հետ տեղեկատվության փոխանակության և այդ տեղեկատվությունը «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում ինքնաշխատ եղանակով կիրառելն ապահովող ենթահամակարգ (այսուհետ՝ Համակարգ)՝ նպատակ ունենալով.<br>1) ընդլայնել շահառուներին մատուցվող էլեկտրոնային ծառայությունների շրջանակը,<br>2) բարելավել և պարզեցնել նպաստների նշանակման վարչարարությունը՝ նվազագույնի հասցնելով պատահական և միտումնավոր սխալների հավանականությունը,<br>3) կրճատել երեխայի ծննդյան միանվագ և խնամքի նպաստների նշանակման և վճարման համար պահանջվող փաստաթղթերը,<br>4) էապես կրճատել թաղման նպաստը նշանակելու և վճարելու ժամկետները:<br>**Առաջադրանքի Նպատակը**<br>Տեխնիկական առաջադրանքի նպատակն է մշակել տեղեկատվական Համակարգ, որը կապահովի.<br>1) երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու (այդ թվում՝ 3-րդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում), խնամքի նպաստ նշանակելու, խնամքի նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու և խնամքի նպաստ վճարելը վերսկսելու, թաղման նպաստ նշանակելու համար առցանց դիմում ներկայացնելը,<br>2) առցանց ներկայացված, ինչպես նաև տարածքային բաժին ներկայացված («Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում հաշվառված) դիմումի հիման վրա ՔԿԱԳ տեղեկատվական համակարգին էլեկտրոնային հարցում կատարելը և անհրաժեշտ տվյալներ ստանալը,<br>3) հարցման հիման վրա ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված տվյալները «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում հաշվառելը և այդ տվյալների հիման վրա որոշումներ կայացնելը (երեխայի ծննդյան միանվագ և մինչև 2 տարեկան երեխայի խնամքի, թաղման նպաստ նշանակելը կամ մերժելը): | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Աշխատանքների շրջանակը<br>12. **Օգտվողների կառավարում և Հասանելիության աստիճանների սահմանում**<br>Համակարգում օգտվողների կառավարումը և հասանելիության աստիճանների սահմանումը իրականացվելու է «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ի օգտվողների կառավարման գործիքներով (այսինքն՝ օգտվողի դերը կամ հասանելիությունը փոխկապակցված է լինելու «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ի օգտվողի դերին):<br>13. **Առցանց դիմումի ներկայացման միջերես**<br>Առցանց դիմումի միջերեսը պետք է առնվազն ապահովի.<br>8. Իրական ժամանակում (առցանց) www.epension.am կայքէջում գրանցվելը և անմիջապես մուտքի անուն և գաղտնաբառ հատկացնելը՝ առցանց եղանակով դիմում ներկայացնելու համար նախատեսված ծրագրային միջավայր (այսուհետ՝ ծրագրային միջավայր) մուտք գործելու համար,<br>9. ծրագրային միջավայր մուտք գործելը՝<br>8) մուտքի անունի և գաղտնաբառի կիրառմամբ,<br>9) նույնականացման քարտի կիրառմամբ,<br>10) բջջային էլեկտրոնային թվային ստորագրության՝ օպերատորի կողմից թողարկված բջջային կապի հեռախոսահամարի կիրառմամբ,<br>10. մահացած անձի՝ կենսաթոշակառու լինելու հանգամանքը ճշտելը՝ «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում առկա տվյալների հիման վրա (եթե առցանց դիմումը ներկայացվում է թաղման նպաստի համար),<br>11. երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակելու (այդ թվում՝ 3-րդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում), խնամքի նպաստը նշանակելու (խնամքի նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու և խնամքի նպաստ վճարելը վերսկսելու), թաղման նպաստը նշանակելու համար անհրաժեշտ տվյալները մուտքագրելը ծրագրային միջավայր (պարտադիր լրացման ենթակա դաշտերը լրացնելը),<br>12. անհրաժեշտ տվյալները մուտքագրված լինելու (պարտադիր լրացման ենթակա դաշտերը լրացված լինելու) և մուտքագրված տվյալների համապատասխանությունը ստուգելը (օրինակ՝ ծննդյան վկայականի համարի համապատասխանություն)՝ ըստ անհրաժեշտության դաշտերի պարտադիրության մասին էկրանին ցուցադրելով նախազգուշացում,<br>13. առցանց եղանակով ներկայացված (ծրագրային միջավայր մուտքագրված) տվյալների հիման վրա ՔԿԱԳ տեղեկատվական համակարգին կատարվող հարցումձևավորելը և ուղարկելը ինքնաշխատ եղանակով,<br>14. առցանց եղանակով ներկայացված (ծրագրային միջավայր մուտքագրված) և ՔԿԱԳ տեղեկատվական համակարգում առկա տվյալները համադրելը և անճշտությունների (անհամապատասխանությունների) առկայության դեպքում այդ մասին դիմողին ծանուցելը (առանց անճշտությունը նշելու),<br>15. առցանց եղանակով ներկայացված տվյալների հիման վրա ներկայացված հարցմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 192-Ն որոշմամբ սահմանված կարգով ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից տվյալներ ստանալը (այդ թվում՝ կրկնակի հարցում կատարելու անհրաժեշտության մասին տեղեկատվություն ստանալը՝ եթե հարցումը կատարվել է երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու դիմումի հիման վրա՝ նպաստը 3-րդ և հաջորդ երեխայի ծնվելու դեպքում սահմանված չափով վճարելու համար, և հարցվող ակտի գրառումները դեռևս չեն թվայնացվել, այսինքն երեխան ծնվել է մինչև 2014 | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | թվականի հունվարի 1-ը), եթե ծրագրային միջավայր մուտքագրված և ՔԿԱԳ տեղեկատվական համակարգում առկա տվյալներում բացակայում են անճշտությունները կամ անհամապատասխանությունները,<br>16. դիմումը (ծրագրային միջավայր մուտքագրված տվյալները, այդ թվում մուտքագրված փոստի հասցեն և e-citizen համակարգում ծնողին հատկացված պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեն, ինչպես նաև առցանց հարցման հիման վրա ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված տվյալները, այդ թվում՝ կրկնակի հարցում կատարելու անհրաժեշտության մասին տեղեկատվությունը) «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում հաշվառելը և այդ մասին ծրագրային միջավայր մուտքագրված փոստի հասցեին և e-citizen համակարգում ծնողին հատկացված պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին համապատասխան հաղորդագրություն ուղարկելը (թաղման նպաստի դեպքում հաղորդագրությունը ներկայացվում է միայն ծրագրային միջավայր մուտքագրված էլեկտրոնային փոստի հասցեին):<br>Ընդ որում, համակարգը պետք է հնարավորություն տա նաև երեխայի ծննդյան միանվագ նպաստի (այդ թվում՝ 3-րդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում) և թաղման նպաստի առցանց դիմումը ներկայացնել նաև ՔԿԱԳ մարմնից՝ ծննդյան ակտի կամ մահվան ակտի գրանցման շրջանակներում:<br>Համակարգում առցանց եղանակով ներկայացված դիմումը հաշվառվում է որպես վարչական ակտ:<br>Համակարգում առցանց եղանակով ներկայացված դիմումի կարգավիճակները համապատասխանում են «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում դիմումների համար սահմանված կարգավիճակներին: Ընդ որում, համակարգը հստակ հաշվառում է նաև առցանց եղանակով ներկայացված դիմումի կարգավիճակի փոփոխության ժամկետները և փոփոխությունը կատարող օգտվողին (գործում ցուցադրելու հնարավորությամբ):<br>14. **ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված («Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում հաշվառված) տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու (երեխայի ծննդյան միանվագ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի, թաղման նպաստ նշանակելու կամ մերժելու) միջերես**<br>ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված («Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում հաշվառված) տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու (երեխայի ծննդյան միանվագ և մինչև 2 տարեկան երեխայի խնամքի, թաղման նպաստ նշանակելու կամ մերժելու) միջերեսը պետք է առնվազն ապահովի.<br>1. առցանց ներկայացված՝ «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում հաշվառված դիմումի (ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված տվյալների) հիման վրա երեխայի ծննդյան միանվագ նպաստ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ, թաղման նպաստ նշանակելը կամ մերժելը, խնամքի նպաստ ստանալու իրավունքը վերականգնելը կամ խնամքի նպաստ վճարելը վերսկսելը կամ մերժելը՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները,<br>2. առցանց ներկայացված դիմումի հիման վրա երեխայի ծննդյան միանվագ նպաստ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ, թաղման նպաստ նշանակելը, խնամքի նպաստ ստանալու իրավունքը վերականգնելը կամ խնամքի նպաստ վճարելը վերսկսելը մերժելու դեպքում մերժման պատճառը հաշվառելը համակարգում (գործում ցուցադրելու հնարավորությամբ),<br>3. առցանց ներկայացված դիմումի հիման վրա երեխայի ծննդյան միանվագ նպաստ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ, թաղման նպաստ նշանակելու կամ մերժելու, | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | խնամքի նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու կամ խնամքի նպաստ վճարելը վերսկսելու կամ մերժելու դեպքում այդ մասին ծրագրային միջավայր մուտքագրված էլեկտրոնային փոստի հասցեին և e-citizen համակարգում ծնողին հատկացված պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին համապատասխան հաղորդագրություն ուղարկելը (թաղման նպաստի դեպքում հաղորդագրությունը ներկայացվում է միայն ծրագրային միջավայր մուտքագրված էլեկտրոնային փոստի հասցեին),<br>4. տարածքային բաժին ներկայացված՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակելու, թաղման նպաստ նշանակելու դիմումների («Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ մուտքագրված տվյալների) հիման վրա ՔԿԱԳ տեղեկատվական համակարգին կատարվող հարցում ձևավորելը և ուղարկելը՝ ինքնաշխատ եղանակով,<br>5. տարածքային բաժին ներկայացված՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակելու, թաղման նպաստ նշանակելու դիմումների հիման վրա «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ մուտքագրված տվյալները և ՔԿԱԳ տեղեկատվական համակարգում առկա տվյալները համադրելը և, անճշտությունների (անհամապատասխանությունների) առկայության դեպքում այդ մասին ծանուցելը (ցուցադրելով անճշտությունը),<br>6. տարածքային բաժին ներկայացված՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակելու, թաղման նպաստ նշանակելու դիմումների հիման վրա կատարված հարցմամբ ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 192-Ն որոշմամբ սահմանված կարգով տվյալներ ստանալը (այդ թվում՝ կրկնակի հարցում կատարելու անհրաժեշտության մասին տեղեկատվություն ստանալը, եթե հարցումը կատարվել է երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու դիմումի հիման վրա՝ նպաստը 3-րդ և հաջորդ երեխայի ծնվելու դեպքում սահմանված չափով վճարելու համար, և հարցվող ակտի գրառումները դեռևս չեն թվայնացվել, այսինքն երեխան ծնվել է մինչև 2014 թվականի հունվարի 1-ը), եթե ծրագրային միջավայր մուտքագրված և ՔԿԱԳ տեղեկատվական համակարգում առկա տվյալներում բացակայում են անճշտությունները կամ անհամապատասխանությունները,<br>7. տարածքային բաժին ներկայացված՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակելու, թաղման նպաստ նշանակելու դիմումների հիման վրա կատարված հարցմամբ ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված տվյալները հաշվառելը «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում (այդ թվում՝ կրկնակի հարցում կատարելու անհրաժեշտության մասին տեղեկատվությունը՝ եթե հարցումը կատարվել է երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու դիմումի հիման վրա՝ նպաստը 3-րդ և հաջորդ երեխայի ծնվելու դեպքում սահմանված չափով վճարելու համար, և հարցվող ակտի գրառումները դեռևս չեն թվայնացվել, այսինքն երեխան ծնվել է մինչև 2014 թվականի հունվարի 1-ը),<br>8. «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում կրկնակի հարցում կատարելու անհրաժեշտության մասին տեղեկատվության առկայության դեպքում (այդ թվում՝ եթե կրկնակի հարցում կատարելու անհրաժեշտության մասին տեղեկատվությունը «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ է մուտքագրվել առցանց դիմումի հիման վրա կատարված հարցմամբ) կրկնակի հարցում ձևավորելը և ուղարկելը ինքնաշխատ եղանակով, այդ թվում՝<br>1) մուտքագրված տվյալների և ՔԿԱԳ տեղեկատվական համակարգում առկա տվյալների | | | | | |

համադրումը և, անճշտությունների (անհամապատասխանությունների) առկայության դեպքում այդ մասին ծանուցումը,

2) մուտքագրված տվյալների և ՔԿԱԳ տեղեկատվական համակարգում առկա տվյալներում անճշտությունների (անհամապատասխանությունների) բացակայության դեպքում ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 192-Ն որոշմամբ սահմանված կարգով տվյալների ստացումը,

3) ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված տվյալների հաշվառումը «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում,

9. տարածքային բաժին ներկայացված դիմումների հիման վրա երեխայի ծննդյան միանվագ նպաստ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի, թաղման նպաստ նշանակելը՝ բացառապես այն դեպքում, եթե տարածքային բաժին ներկայացված դիմումի հիման վրա «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ մուտքագրված տվյալների և ՔԿԱԳ տեղեկատվական համակարգում առկա տվյալներում առկա չեն անհամապատասխանություններ կամ կրկնակի հարցում կատարելու անհրաժեշտության մասին տեղեկատվությունը,

10. տարածքային բաժին ներկայացված դիմումի հիման վրա երեխայի ծննդյան միանվագ նպաստ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի, թաղման նպաստ նշանակելը, մերժելը՝ եթե տարածքային բաժին ներկայացված դիմումի հիման վրա «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ մուտքագրված տվյալների և ՔԿԱԳ տեղեկատվական համակարգում առկա տվյալներում առկա են անհամապատասխանություններ կամ կրկնակի հարցում կատարելու անհրաժեշտության մասին տեղեկատվություն:

15. **Արխիվացում**

Համակարգում տվյալների արխիվացումը իրականացվելու է «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ի համար կիրառվող ընդհանուր կանոններով:

16. ***Որոնման համակարգ և հաշվետվություններ***

Համակարգը համար պետք է ունենա՝

- հաշվետվություն՝ առցանց ներկայացված («Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում հաշվառված) դիմումների վերաբերյալ՝ ըստ ժամանակահատվածի, ծառայության տարածքային բաժինների և նպաստի տեսակների (երեխայի ծննդյան միանվագ նպաստի դեպքում՝ ըստ կարգաթվի), դիմումի կարգավիճակի,
- հաշվետվություն՝ առցանց ներկայացված («Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում հաշվառված) դիմումների հիման վրա նշանակված նպաստների վերաբերյալ՝ ըստ դիմումի ներկայացման ժամանակահատվածի, ծառայության տարածքային բաժինների և նպաստի տեսակների (երեխայի ծննդյան միանվագ նպաստի դեպքում՝ ըստ կարգաթվի),
- հաշվետվություն՝ առցանց ներկայացված («Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում հաշվառված), մերժված դիմումների վերաբերյալ՝ ըստ դիմումի ներկայացման ժամանակահատվածի, ծառայության տարածքային բաժինների, մերժման պատճառների և նպաստի տեսակների (երեխայի ծննդյան միանվագ նպաստի դեպքում՝ ըստ կարգաթվի),
- այն գործերի (դիմումների) որոնման (ֆիլտրման) հնարավորություն, որոնցում առկա է կրկնակի հարցում կատարելու անհրաժեշտության մասին տեղեկատվություն՝ ըստ կրկնակի հարցում կատարելու անհրաժեշտության մասին տեղեկատվության մուտքագրման աղբյուրի (առցանց դիմում, ՏԲ ներկայացված դիմում), դիմումի ներկայացման ժամանակահատվածի, ծառայության տարածքային բաժինների և նպաստի տեսակների (երեխայի ծննդյան միանվագ

նպաստի դեպքում՝ ըստ կարգաթվի),

- առցանց ներկայացված դիմումի որոնման հնարավորություն՝ ըստ ծրագրային միջավայր մուտքագրված տվյալների,
- որոնման արդյունքների և հաշվետվությունների արտածման գործիք, որի միջոցով որոնման արդյունքները և հաշվետվությունները կարող են տպվել կամ արտահանվել արտաքին կիրառական ծրագրերով մշակման համար (excel),

17. **Ինտեգրում այլ տեղեկատվական համակարգերին (տվյալներին)**

Համակարգը պետք է ինտեգրվի «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգին՝ որպես ենթահամակարգ։

18. **Ընդհանուր տեխնիկական պահանջներ**

Համակարգը պետք է ունենա՝

- Բազմակապ կառուցվածք,
- Ստանդարտ RDBMS (պետք է տրամադրվի Կատարողի կողմից),
- Web native standard workflow (W3C համատեղելի, պետք է տրամադրվի Կատարողի կողմից),
- Վեբ ինտերֆեյս (Full web interface),
- XML համատեղելի կառուցվածք ,
- Լիարժեք հայացման հնարավորություն (օգտվողի ինտերֆեյսի և դաշտերի արժեքների համար հայկական այբուբենի կիրառման հնարավորությամբ),
- APIs առնվազն մեկ ստանդարտ լեզվով,

Կատարողը կարող է առաջարկել առկա, պատրաստի ծրագրային ապահովում և այնուհետև հարմարեցնել, տեղայնացնել և համապատասխանեցնել այն սույն տեխնիկական առաջադրանքի պահանջներին կամ կարող է առաջարկել մշակել նախապես պատվիրված ծրագրային ապահովում. մրցակցային տեսակետից որևէ տարբերություն չի կիրառվի առաջարկներից և ոչ մեկի դեպքում։

**Ծառայությունների իրականացման փուլերը**

Ծառայությունները մատուցվելու են երկու փուլով։

3) Փուլ 1. Համակարգի նախագծում,

4) Առցանց դիմումի ներկայացման միջերեսի մշակում և ներդրում, ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու միջերեսի՝ առցանց դիմումի հիման վրա նպաստների նշանակման բաղադրիչի մշակում և ներդրում, ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու միջերեսի ամբողջական մշակում և ներդրում, օգտվողի ձեռնարկի մշակում և անձնակազմի վերապատրաստում (ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու մասով)։

Առցանց դիմումի հիման վրա նպաստների նշանակման բաղադրիչի կիրարկումը նախատեսվում է ոչ ուշ, քան 2018 թվականի հունվարի 1-ը։ Միաժամանակ, մինչև 2019 թվականի հունվարի 1-ը Կատարողը պետք է իրականացնի երաշխիքային սպասարկում՝ շտկելով հայտնաբերված թերությունները։

**Փուլ 1. Համակարգի նախագծում, Առցանց դիմումի ներկայացման միջերեսի մշակում և ներդրում, ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու միջերեսի՝ առցանց դիմումի հիման վրա նպաստների նշանակման բաղադրիչի մշակում և ներդրում (1 ամիս)**

- Գործառութային պահանջների (այդ թվում՝ այլ տեղեկատվական համակարգերի հետ

ինտեգրման պահանջների) գնահատում,

- Համակարգի հիմնական բիզնես գործընթացների և ինտերֆեյսային նկարագրություն (ներառյալ՝ դաշտերի նկարագրություն),
- Առցանց դիմումի ներկայացման միջերեսի ծրագրավորում
- Առցանց դիմումի հիման վրա ՔԿԱԳ տեղեկատվական համակարգին հարցում կատարելու և հարցման պատասխանը ստանալու ընթացակարգերի ծրագրավորում
- Առցանց դիմումի հիման վրա ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված տվյալները «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում հաշվառելու ընթացակարգերի ծրագրավորում
- Առցանց դիմումով ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված տվյալների հիման վրա նպաստների նշանակման ընթացակարգերի ծրագրավորում
- Կրկնակի հարցում կատարելու կատարելու ընթացակարգերի ծրագրավորում՝ համաձայն փուլ 1-ում նշված բիզնես գործընթացների նկարագրության,
- Առցանց դիմումների վերաբերյալ հաշվետվությունների ծրագրավորում,
- Առցանց դիմումի ներկայացման միջերեսի մշակում և ներդրում, ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու միջերեսի՝ առցանց դիմումի հիման վրա նպաստների նշանակման բաղադրիչի փորձնական կիրառություն և հայտնաբերված թերությունների շտկում:

**Փուլ 2. ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու միջերեսի ամբողջական մշակում և ներդրում, համակարգի ամբողջական գործարկում,**

- Առցանց դիմումով ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված տվյալների հիման վրա խնամքի նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու և խնամքի նպաստ վճարելը վերսկսելու ընթացակարգերի ծրագրավորում՝ համաձայն փուլ 1-ում նշված բիզնես գործընթացների նկարագրության,
- Տարածքային բաժին ներկայացված դիմումի հիման վրա ՔԿԱԳ տեղեկատվական համակարգին հարցում կատարելու և հարցման պատասխանը ստանալու ընթացակարգերի ծրագրավորում՝ համաձայն փուլ 1-ում նշված բիզնես գործընթացների նկարագրության,
- Տարածքային բաժին ներկայացված դիմումի հիման վրա ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված տվյալները «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում հաշվառելու ընթացակարգերի ծրագրավորում՝ համաձայն փուլ 1-ում նշված բիզնես գործընթացների նկարագրության,
- Տարածքային բաժին ներկայացված դիմումով ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված տվյալների հիման վրա նպաստների նշանակման ընթացակարգերի ծրագրավորում՝ համաձայն փուլ 1-ում նշված բիզնես գործընթացների նկարագրության,
- Բոլոր հաշվետվությունների ծրագրավորում,
- ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու միջերեսի փորձնական կիրառություն և հայտնաբերված թերությունների շտկում:
- Օգտվողի ձեռնարկի մշակում և անձնակազմի վերապատրաստում (ՔԿԱԳ տեղեկատվական համակարգից ստացված տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու մասով):

**Կատարողը կարող է միաժամանակ աշխատել մի քանի փուլի վրա, երբ դա հնարավոր է:**

Հաշվետվություններ

**Ծառայությունների իրականացման ընթացքում յուրաքանչյուր փուլի աշխատանքների ա-վարտից հետո Կատարողը պատվիրատուին պետք է ներկայացնի հաշվետվություններ**

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | համաձայնեցման նպատակով, որոնց պետք է կցվեն տվյալ փուլում մշակված բոլոր նյութերը:<br>Կատարողը նշված հաշվետվությունների թղթային և էլեկտրոնային տարբերակները մեկական օրինակով հայերեն լեզվով պետք է ներկայացնի պատվիրատուին ոչ ուշ, քան տվյալ փուլի աշխատանքները ավարտելուց հետո՝ 5 օրվա ընթացքում:<br>Ժամկետներ և գաղտնիություն<br>Նախագծի ընդհանուր ժամկետը սահմանված է պայմանագրով, որին գումարվում է երաշխիքային սպասարկման ժամկետը՝ մինչև 01.01.2019թ.:<br>Կատարողը պարտավորվում է.<br>3) ապահովել այն տեղեկատվության գաղտնիությունը, որը նրան հայտի կդառնա նախագծի իրականացման ընթացքում,<br>4) բացառել նախագծի իրականացման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկատվության օգտագործումը այլ նպատակներով, կամ փոխանցումը երրորդ կողմին քան նախագծի իրականացումն է, :<br>Կազմակերպական հարցեր<br>Պատվիրատուն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունն է:<br>Վերապատրաստման հետ կապված ծախսերը (բացի վերապատրաստողներին վճարելը) հոգում է պատվիրատուն:<br>Այլ պայմաններ<br>Տեղեկատվական համակարգի հետ կապված բոլոր գույքային և ոչ գույքային իրավունքները պատկանում են Պատվիրատուին | | | | | |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության
պետական ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011017002

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի օբ. 2-րդ շենք, բն 28
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 163018219838
ՀՎՀՀ 02236157

(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված N 2*
*«      »          20  թ. կնքված*
*ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/8 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | |
|---|---|---|---|---|---|
| h/h | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | |
| | | | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1. | 72231200/10 | 1. Գործարքների իրականացման և պատվերով ծրագրային ապահովման մշակման ծառայություններ | -- | 11700000 | 11700000 |
| 2. | 72231200/9 | 2. Գործարքների իրականացման և պատվերով ծրագրային ապահովման մշակման ծառայություններ | -- | 17450000 | 17450000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011017002

-----------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի օբ. 2-րդ շենք, բն 28
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Շենգավիթ մ/6
Հ/Հ 163018219838
ՀՎՀՀ 02236157

-----------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
«06» 12 2017թ. կնքված
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/8 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ ____________________ |
| ____________________ | ____________________ |
| հվհհ ____________________ | հվհհ ____________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

§ ¦ § ¦ 20 Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ____________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «______________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «______________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3.1
« 06 » 12 2017թ. կնքված
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/8 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված 10*

*ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/8 ծածկագրով*
*գնանշման հարցման հրավերի*

**ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(պայմանագրի կատարման ապահովում)**

ք. Երևան «05»դեկտեմբերի 2017 թ.**

«Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Գագիկ Ալեքսանյանի ,որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/8 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ :

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ
ընկերության անվանումը

ք. Երևան, Շիրակի փբ. 2-րդ շենք բն.28
ընկերության հասցեն

ՀԷԲ Շենգավիթ մասնաճյուղ ՓԲԸ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

Հ/հ 163018219838

ՀՎՀՀ 02236157

Գագիկ Ալեքսանյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ[1]